




**ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍՓՅՈՒՌՔԻՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**«ԳԱԼՈՒՍԻ ԿԻԼՊԵԼԿԵԱՆ»  
ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ**



## **ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**

ք. Երևան «28» Հոկտեմբեր, 2014թ.

Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությունն (այսուհետ՝ Նախարարություն), ի դեմս նախարար Հրանուշ Հակոբյանի, որը գործում է համաձայն Նախարարության կանոնադրության, մի կողմից և «Գալուստ Կիլպենկեան» հիմնարկությունը (այսուհետ՝ Հիմնարկություն), ի դեմս «Գալուստ Կիլպենկեան» հիմնարկության հոգաբարձու Մարտին էսայանի, որը գործում է Պորտուգալիայի օրենքների համաձայն մյուս կողմից, (այսուհետ՝ Կողմեր). կարևորելով հայմշակույթի ու հայոց լեզվի պահպանումը և զարգացումը Սփյուռքում, Հայրենիք-Սփյուռք գործակցությունում գիտական, կրթական, հրատարակչական և մշակութային կապերի ամրապնդման անհրաժեշտությունը, կնքեցին սույն Համաձայնագիրը հետևյալի մասին.

### **1. ՆՊԱՏԱԿ**

**1.1.** Կողմերը համաձայն են համագործակցել հետևյալ հատուկ կետերի շուրջ.

ա. Ցուցաբերել օժանդակություն այն ձեռնարկներին, որոնք իրականացվելու են «Հայաստանում արևմտահայերենի ուսուցման կենտրոնի» և այլ նմանօրինակ հաստատությունների կողմից,

բ. տրամադրել կրթաթոշակներ Հայաստանի բուհերում հայագիտական առարկաների գծով սովորող սփյուռքահայ ուսանողներին:

**1.2.** Կողմերը համաձայն են համադրել արևմտահայերեն ուսուցման նյութերը (տպագիր և էլեկտրոնային) հրատարակել և տարածել:

**1.3.** Կողմերը տեղեկացնելու են միմյանց իրենց համապատասխան գործունեության մասին և ուսումնասիրել հավելյալ համատեղ գործակցության հնարավորությունները: